

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե»

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 33/6

28 օգոստոսի 2012թ.

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 27.07.2012թ-ի նիստում քննության է առնվել «Ռուսալ Արմենալ» ՓԲԸ 16.07.2012թ. թիվ 000-411 գանգատը «ԿԱ ՊԵԿ հարկ վճարողների ՀՏ 03.07.2012թ. թիվ 1013309 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես, համաձայն «ԿԱ ՊԵԿ նախագահի 17.02.2011թ. թիվ 1013309 հանձնարարագրի «օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Ռուսալ Արմենալ» ՓԲԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում: Ստուգման արդյունքում 03.07.2012թ-ին կազմվել է թիվ 1013309 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 80.589.606 դրամ, ինչպես նաև 29.317.157 դրամ պակասեցման ենթակա գումար:

Ընկերության բողոքը վերաբերում է ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով առաջադրված պարտավորությանը՝ գումարով 24.623.709 դրամ: Ստուգման ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է.

Ընկերությունն արտասահմանյան Բավարիայի պետական բանկից (Bayerische Landesbank) 2006թ-ին ձևակերպել է վարկ: Հետագայում 2009թ-ի դեկտեմբերից սկսած վարկի տոկոսները նոր վարկային պայմանագրով կապիտալացվել են և ավելացվել են վարկի հիմնական «մայր» գումարին: Ստուգվող ժամանակաշրջանի ընթացքում հաշվարկված և կապիտալացված 472.249.920 դրամ վարկի տոկոսներից չի հաշվարկվել և «Ը բյուջե չի վճարվել ոչ ռեզիդենտի շահութահարկ 47.224.992 դրամի չափով, այդ թվում՝ 2009թ. դեկտեմբերին 5.658.959 դրամ, 2010թ-ի մարտին 14.865.257 դրամ, հունիսին 15.251.647 դրամ, սեպտեմբերին 11.449.129 դրամ:

Խախտվել են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 3-րդ մասի «բ» կետի, 57-րդ հոդվածի 1-ին մասի և 64-րդ հոդվածի պահանջները, համաձայն որոնց վարկի դիմաց հաշվարկված տոկոսները համարվում են հայաստանյան արժույթներից ստացված եկամուտներ և ոչ ռեզիդենտին վճարվող այդ եկամուտներից 10% դրույքաչափով հարկի պահումն իրականացնում է հարկային գործակալը:

Միաժամանակ ստուգմամբ պարզվել է, որ հարկային գործակալի կողմից ավել է հաշվարկվել 46.225.178 դրամ ոչ ռեզիդենտի շահութահարկ, այդ թվում՝ 2010թ. փետրվարին 5.458.892 դրամ, 2010թ-ի օգոստոսին 28.533.996 դրամ, 2010թ-ի հոկտեմբերին 12.232.290 դրամ:

Արդյունքում խմբագրելով ավել և պակաս հաշվարկված ոչ ռեզիդենտի շահութահարկն ըստ ոչ ռեզիդենտի շահութահարկի ամփոփ հաշվարկների ներկայացման հաշվետու ժամանակաշրջանների (եռամսյակների) ստացվում է, որ հարկային գործակալի կողմից ներկայացված հաշվարկներով պակաս հարկ է հաշվարկվել ընդամենը 30.316.971 դրամ և ավել հարկ է հաշվարկվել ընդամենը 29.317.157 դրամ, որը ենթակա է պակասեցման:

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածների դրույթները ընդամենը ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով ենթակա է լրացուցիչ գանձման 53.940.866 դրամ և ենթակա է պակասեցման 29.317.157 դրամ:

«Ռուսալ Արմենալ» ՓԲԸ գանգատում մասնավորապես նշված է.

Ստուգման արդյունքներով ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով հարկային ծառայության կողմից ներկայացվել է 24.623.709 դրամի լրացուցիչ գանձման պահանջ, որն ընկերության կարծիքով ընդունելի չէ:

Հարցը հետևյալն է.

Ըստ ստուգման ակտի. «Ընկերությունն արտասահմանյան Բավարիայի պետական բանկից 2006թ-ին ձևակերպել է վարկ: Հետագայում 2009թ-ի դեկտեմբերից սկսած վարկի տոկոսները նոր վարկային պայմանագրով կապիտալացվել են և ավելացվել վարկի հիմնական «մայր» գումարին: Ստուգվող ժամանակաշրջանի ընթացքում հաշվարկված և կապիտալացված տոկոսներից չի հաշվարկվել և ՀՀ բյուջե չի վճարվել ոչ ռեզիդենտի շահութահարկ...»:

Ընկերության մոտեցումը.

«Ռուսալ Արմենայ» ՓԲԸ կողմից սարքավորումների արդիականացման ծրագրի իրականացման ֆինանսավորման համար վարկային միջոցներ են ներգրավվել գերմանական Bayerische Landesbank բանկից: Վարկային միջոցները տրամադրվել են համաձայն 2004թ. հոկտեմբերին և 2005թ. մարտին կնքված համապատասխանաբար 6,990 մլն եվրոյի ու 39,610 մլն եվրոյի գումարների վարկային պայմանագրերի: Վարկերը տրամադրվել են հետևյալ պայմաններով.

1. 6,990 մլն եվրոյի վարկային պայմանագրի գծով՝

- մարման իրականացումը մինչև 2009թ. դեկտեմբերը 7 հավասար մասերով կիսամյակային կտրվածքով,

- տարեկան տոկոսադրույքը՝ EURIBOR գումարած Մարժա (տարեկան 3,875%),

- տոկոսների վճարման ժամկետը՝ յուրաքանչյուր կիսամյակի վերջին օր:

2. 39,610 մլն եվրոյի վարկային պայմանագրի գծով՝

- մարման իրականացումը մինչև 2013թ. հունիսը 14 հավասար մասերով կիսամյակային կտրվածքով.

- տարեկան տոկոսադրույքը՝ EURIBOR գումարած Մարժա (տարեկան 0,35%),

- տոկոսների վճարման ժամկետը՝ յուրաքանչյուր կիսամյակի վերջին օր:

Համապատասխանաբար յուրաքանչյուր կիսամյակի վերջին վճարված տոկոսների գծով, համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 57-րդ և 64-րդ հոդվածների, «Ռուսալ Արմենայ» ՓԲԸ-ն որպես հարկային գործակալ, եկամտի վճարման աղբյուրի մոտ ոչ ռեզիդենտին վճարվող եկամտի ընդհանուր գումարից իրականացրել է շահութահարկի պահում (պանծում) 10%-ի չափով: Պայմանագրերը նման պայմաններով գործել են մինչև 2009թ. դեկտեմբեր ամիսը:

2009թ. դեկտեմբերի 7-ին ստորագրվել է Rusal խմբի վարկային պարտավորությունների վերանայման համաձայնագիր, ըստ որի «Ռուսալ Արմենայ» ՓԲԸ նախկինում գործող երկու պայմանագրերի գծով չմարված վարկային միջոցների գումարները (28,005 մլն եվրոյի) միավորվել են և դրանց գծով վերասահմանվել են նոր պայմաններ՝ մարումն ըստ վարկառուի ցանկության, սակայն ոչ ուշ, քան 2013թ. դեկտեմբերի 7-ը,

- տարեկան տոկոսադրույքը՝ EURIBOR գումարած CASH PAY Մարժա (տարեկան 1,75%-3%) գումարած PIK Մարժա (տարեկան 5,25%-1%),

- տոկոսների մարման կարգը՝ EURIBOR գումարած CASH PAY Մարժայի մասով վճարման ժամկետը՝ յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 9-ը, PIK Մարժայի մասով՝ նույն պահով կապիտալացում, ավելացում վարկի գումարին և վճարում՝ ըստ վարկի մարման պայմանի:

Այսպիսով, կապիտալացված տոկոսների (PIK Մարժա) մասով «Ռուսալ Արմենայ» ՓԲԸ կողմից, 1 համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի, աղբյուրի մոտ շահութահարկի պահումն իրականացվել է ոչ ռեզիդենտին եկամտի փաստացի վճարման պահին, այն է՝ վարկի տվյալ մասի մարմանը զուգընթաց:

Հետևաբար, հաշվարկված և վճարված տոկոսների մասով «Ռուսալ Արմենայ» ՓԲԸ ստուգված ժամանակաշրջանի ընթացքում ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները և լրացուցիչ տույժերի, տուգանքների առաջացումը համարում է անհիմն:

«ՀԱՆՏԱԿԱՆ ԳԱՆՁԱՏԱՐԿԿՄԱՆ ԿԱՆԾՆԱԺՈՂՈՎ» (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցչի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստաթղթերը, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

«Ճահութահարկի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն. «Սույն օրենքի իմաստով՝ հայաստանյան աղքյուրից ստացված եկամուտներ են համարվում ոչ ռեզիդենտի՝ ռեզիդենտից կամ ոչ ռեզիդենտից ստացված պասիվ եկամուտները»:

«Ճահութահարկի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետի համաձայն. «Պասիվ եկամուտներ են համարվում՝ ոչ ռեզիդենտի կողմից իր գույքի կամ այլ ակտիվների ներդրմամբ (տրամադրելով) Հայաստանի Հանրապետության տարածքում բացառապես այլ անձանց գործունեությունից ստացված եկամուտները, այսինքն՝ տոկոսները»:

«Ճահութահարկի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի համաձայն. «Սույն օրենքի 57 հոդվածի համաձայն՝ աղքյուրի մոտ շահութահարկի պահումը (գանձումը) իրականացնում է հարկային գործակալը՝ ոչ ռեզիդենտին վճարվող եկամտի ընդհանուր գումարից»:

Բնարկվող դեպքում 2009թ. դեկտեմբերի 7-ին ստորագրված վարկային պարտավորությունների վերանայման համաձայնագրի համաձայն, «Ռուսալ Արմենալ» ՓԲԸ նախկինում գործող երկու պայմանագրերի գծով չմարված վարկային միջոցների գումարները միավորվել են և դրանց գծով վերասահմանվել են նոր պայմաններ: Մասնավորապես, սկսած 2009թ. ի դեկտեմբեր ամսից վարկի տոկոսները նոր վարկային պայմանագրով կապիտալացվել են և ավելացվել են վարկի հիմնական «մայր» գումարին: Հետևապես ղեկավարվելով «Ճահութահարկի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 3-րդ մասի «բ» կետի, 57-րդ հոդվածի 1-ին մասի և 64-րդ հոդվածի պահանջներով, ստուգվող ժամանակաշրջանում հաշվարկված և կապիտալացված 472.249.920 դրամ վարկի տոկոսներից ընկերությունը պետք է հաշվարկեր և բյուջե վճարեր ոչ ռեզիդենտի շահութահարկ 10% դրույքաչափով:

Կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանձատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանձատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը և ստատուելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանձատարկման խորհուրդ:

Որոշման նախագծի վերաբերյալ Գանձատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:


Որոշվել քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Որոշման ակտը թողնել անփոփոխ:

2. Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատարանն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ